Հաստատում եմ
«Մեհրաբյանի անվան բժշկական
քոլեջ» ՍՊՀ քոլեջի ստորաբաժանման
տնօրեն
_____Վ. Բաբայան
«04» ____07____2022թ.

ԿԱՐԳ

«Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ բժշկական քոլեջի աշխատանքի որակի ապահովման կենտրոնի գործունեության

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ բժշկական քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) որակի ապահովման կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) քոլեջի ստորաբաժանում է, որն իրականացնում է ներքին որակի ապահովման գործառույթներ: Կենտրոնը գործում է սույն կարգի համաձայն, որը հաստատվում է Քոլեջի տնօրենի կողմից;

2. ԿԵՆՏՐՈՆԻ ՆՊԱՏԱԿԸ

2.1.Որակի ապահովման կենտրոնի հիմնական նպատակն է ձևավորել քոլեջի առաքելության իրագործման համար անհրաժեշտ պայմաններ կրթության որակի ապահովման ուղղությամբ:

3. ԿԵՆՏՐՈՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1.Որակի ապահովման կենտրոնի հիմնական խնդիրներն են.

- Ապահովել, արդիականացնել և զարգացնել որակի ապահովման համակարգը:
- Ուսումնական հաստատությունում ապահովել որակի կառավարման արդիական, պրակտիկայում փորձարկված տեխնոլոգիաների ներդրումը և կիրառումը:
- Ձևավորել ուսումնական ստորաբաժանումների որակի ապահովման ներքին համակարգ:

4. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4.1.Որակի ապահովման կենտրոնի գործառույթներն են.

- որակի ապահովման գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, մշակումը, համապատասխան տեղեկատվության և խորհրդատվության տրամադրումը քոլեջի բոլոր շահեկիցներին,
- կրթության կազմակերպման գործընթացի, այդ թվում՝ ուսումնամեթոդական, նյութատեխնիկական, կադրային ապահովվածության արդյունավետության գնահատումը, համապատասխան առաջարկությունների ներկայացումը,
- քոլեջի ուսումնական ստորաբաժանումների կողմից ուսման որակի ապահովման ներքին գործընթացների պլանավորման և մշակման աշխատանքներին մասնակցությունը,
- որակի ներքին գնահատման գործիքակազմի մշակումը,
- կրթական գործունեության արտաքին վերահսկողության չափանիշների ապահովման գնահատումը,
- որակի արտաքին գնահատում իրականացնող կառույցների հետ համագործակցության իրականացումը,
- որակի ապահովման միջազգային փորձի ուսումնասիրությունը, համապատասխան մեխանիզմների տեղայնացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը: